

3072



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ



« 08 » 07 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0116-21

Ձեռնարկողը՝

Արման Հակոբջանյան

ք. Սյրեպանակերտ, Իվանյան փ. պրուն 1 նրբանցք 4

Գործունեությունը՝ Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի 1-ին փողոց՝
88/3-4, 88/2, 88 հասցեներում անհատական հանգստի
գոյրու կառուցման շրջակա միջավայրի վրա
ազդեցության նախնական գնահատման հայտ
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող՝



Խ. Մարտիրոսյան

Առդիր՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0116-21
<08> 07 2021թ.

**Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի 1-ին փողոց՝
88/3-4, 88/2, 88 հասցեներում նախատեսվող անհատական հանգստի գոտու
կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման
հայտ**

Ձեռնարկող՝
Փաստաթղթի տեսակը՝

Արման Հակոբջանյան
Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Գործունեությունը՝
Տեղադրման վայրը՝

«Գ» կատեգորիա
Գեղարքունիքի մարզ, Շողակաթ համայնք

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 6-րդ մասի, 7)-րդ կետի ա. ենթակետի՝ Դրախտիկ գյուղի 1-ին փողոց 88/3-4, 88/2, 88 հասցեներում նախատեսվող անհատական հանգստի գոտու կառուցումը, որպես քաղաքաշինության բնագավառի գործունեություն, դասակարգվում է «գ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Ներածական մաս Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի 1-ին փողոց, 88/3-4, 88/2, 88 հասցեներում, Արման Հակոբջանյանին /այսուհետ՝ կառուցապատող/ տրամադրված՝ 0.508 հա մակերեսով հողամասում /որը բաղկացած է երեք կտորներից/ նախատեսվում է կառուցել անհատական հանգստի գոտի: Կառուցապատվող հողամասը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Շողակաթ համայնքի Դրախտիկ գյուղի ափամերձ հատվածում՝ «Սևան» Ազգային պարկ»-ի ռեկրեացիոն գոտիում: Հողամասի նպատակային նշանակությունը հատուկ պահպանվող տարածքների է, իսկ գործառնական նշանակությունը՝ հանգստի համար նախատեսված:

Հանգստի գոտու նախագծային աշխատանքների համար հիմք են հանդիսացել՝ Շողակաթ համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի մարտի 05-ին տրված թիվ 4 նախագծման թույլտվությունը (ճարտարապետահատակագծային առաջադրանք/ և կառուցապատողին հողամասի կառուցապատման իրավունքով տրամադրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականները (որոնք ներկայացվել են հայտին կից փաստաթղթերում):

Նկարագրական մաս Կառուցապատման ենթակա տարածքը միջին թեքություններով, մասնակի կառուցապատված տարածք է, որի մակերևույթի բարձրությունները տատանվում են 1905-1915 մ սահմաններում: Հանգստի գոտու երկու մուտքերն ապահովվում են Շորժա տանող մայրուղուն կից: Շինարարական աշխատանքների ընթացքում ծառահատում չի իրականացվելու:

Հանգստի գոտու համար հատկացված ընդհանուր 5080 քմ հողամասում նախագծված են.

- Պահակակետ, օժանդակ սենյակներով (հատակի նիշ՝±0.000=1916.45մ, հատակագծային չափեր՝ 69.8 քմ), որը նախատեսված է հանգստի գոտու մուտքային հատվածում,
- Առանձնատուն (հատակի նիշ՝±0.000=1909.75մ, մակերեսը՝ 211.3քմ), որի առաջին հարկում նախագծված է հյուրասրահը և խոհանոցային մասը, նախամուտքային



հատվածում՝ շվաքարան-ամառային խոհանոցը, իսկ երկրորդ հարկում նախագծված են 5 ննջասենյակներ՝ իրենց առանձին սանհանգույցներով և պատշգամբներով/,

- Փայտե բնակելի տուն (հատակի նիշ՝ $\pm 0.000=1905.15$ մ, մակերեսը՝ 76.7 քմ),
- Ստորգետնյա տնտեսական շինություն (հատակի նիշ՝ $\pm 0.000=1906.20$ մ, մակերեսը՝ 61 քմ),
- Օժանդակ կառույց՝ սկուտերների և կատերների պահպանման համար, մակերեսը՝ 140.2 քմ:

Հանգստի գոտու տարածքում նախատեսված է նաև լողավազան, խաղահրապարակ խարույկատեղ, առափնյա նավամատուց և ստորգետնյա մաքրման կայան: Լողավազանը կրում է դեկորատիվ բնույթ, տարողությունը կազմում է մոտ 100խմ, տարեկան կլցվի 2 անգամ: Լողավազանի ջուրը ամբողջությամբ կօգտագործվի ոռոգման նպատակով:

Հանգստի գոտու տեխնիկատնտեսական ցուցանիշներն են.

- Տարածքի ընդհանուր մակերես՝ 5080քմ,
- Տարածքում նախատեսվող շենք-շինությունների մակերես՝ 1236.9 քմ,
- Ճեմուղիներ, մայթեր՝ 282.1 քմ,
- Կանաչապատման մակերես - 3561 քմ:

Հանգստի գոտու նախագծային լուծումներն իրականացվել են նախագծման թույլտվության պահանջներին և նշված գոտու համար սահմանված քաղաքաշինական չափորոշիչներին /Սևանա լճի կենտրոնական գոտում կառուցապատման համար նախատեսված տարածքների գոտևորման նախագիծ/ համապատասխան: Նախագծված տարածքում 1905.0 մ բացարձակ նիշից ցածր հիմնական շինություններ նախատեսված չեն: Մաքրման կայանը տեղադրվելու է 1906.2 մ բացարձակ նիշի վրա:

Տարածքի էլեկտրամատակարարումը կիրականացվի «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանի համաձայն: Հանգստի գոտու ջեռուցումը և տաք ջրամատակարարումը նախատեսված է էլեկտրական սարքերի միջոցով: Հանգստի գոտում հանգստացողների կոմունալ-կենցաղային նպատակով ջրամատակարարումը կիրականացվի ավտոցիստեռնով՝ պայմանագրային հիմունքներով: Այդ նպատակի համար տարածքում նախատեսվում է տեղադրել ջրի ռեզերվուար, որը կմիացվի ներքին ջրամատակարարման ցանցին: Ներքին և արտաքին ցանցերը մոնտաժվում են պոլիպրոպիլենե խողովակներից: Կենցաղային հոսքաջրերը սանիտարատեխնիկական սարքավորումներից ինքնահոս խողովակներով կհեռացվեն նախագծվող արտաքին ցանց, որտեղից կուղղվեն մաքրման կայան:

Հանգստի գոտու համար նախատեսված լողափը կկահավորվի ՀՀ Կառավարության 2008թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1563-Ն որոշման տեխնիկական բնութագրերի համաձայն:

Հանգստի գոտու շինարարական աշխատանքները նախատեսվում է իրականացնել 1 տարվա ընթացքում, որից հողային աշխատանքների տևողությունը կկազմի 1 ամիս: Հողային զանգվածների ծավալները ներառում են 480 մ³ ծավալով հանույթ, 380մ³ ծավալով հետլիցք: Մնացորդային հողային զանգվածի 100 մ³ ծավալը կօգտագործվի տարածքը բարկարգելու և հարթեցնելու նպատակով: Հողային աշխատանքների ընթացքում բուսահողը /որի ծավալը գնահատվել է 300մ³/ նախատեսվում է հատուկ միջոցառումներով պահեստավորել, հետագայում, շինարարության ավարտից հետո

